

Բաղայան Մ. – Բարեկամության նոր կամուրջ – թերթ, «Ազգ», Ե., 16.11.2013

Թբիլիսիի արվեստի ակադեմիայի սաների ցուցահանդեսը Ալբեր եւ Թովե Բոյաջյան պատկերասրահում

Երեկվա օրը Երեւանի գեղարվեստի ակադեմիայի համար առանձնահատուկ էր, ինչպես նշեց ռեկտոր Արամ Իսաբեկյանը՝ տարբերվող եւ նշանավոր: Ակադեմիայի Ալբեր եւ Թովե Բոյաջյան ցուցասրահի՝ մշտապես ակտիվ աշխատանքը միանգամայն այլ շունչ ուներ: Բանն այն է, որ այս անգամ ցուցասրահը հյուրընկալել էր Թբիլիսիի արվեստի պետական ակադեմիայի սաների աշխատանքները, եւ դրանց հեղինակների ներկայությունը բավական փոխել էր տեղի միջավայրը: Մանավանդ եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ բավական երկար տարիներ դրացի երկրի հետ մշակութային կամ այլ հարաբերությունները, անկասկած, շատ հեռու են եղել նախկինում եղածից, ապա այս ցուցահանդեսի նշանակությունը ավելի ընդգծվում է: Խոսքն, իհարկե, ոչ թե մեկ առանձին ցուցահանդեսի մասին է, այլ 2 երկրների հիշյալ բուհերի համատեղ լուրջ ծրագրի, որն ակնկալում է ստեղծագործական ակտիվ շարունակություն: Նման ծրագրի մտահղացումը ծնվել էր տարիներ առաջ դեռ, սակայն քաղաքական եւ այլ պատճառներով անհնարին էր եղել այն իրականացնել: Ներկա պայմանների՝ շատ ավելի բարենպաստ լինելու հանգամանքը նաեւ նպաստեց, որ կյանքի կոչվի 1,5 ամիս առաջ բուհերի ռեկտորների մշակած ծրագրի առաջին փուլը՝ երեւանյան այս ցուցահանդեսով: Ալբեր եւ Թովե Բոյաջյան ցուցասրահը սովոր է այսպես ասած իր բուհի ուսանողների ոճին ու մտածողությանը, ուսումնական ողջ տարվա ընթացքում երիտասարդները իրենց ստեղծագործական աշխարհը ներկայացնելու հրաշալի հնարավորություն ունեն եւ դա իրացնում են: Իսկ ահա վրացի ուսանողների աշխատանքները նորություն էին, նաեւ թարմություն՝ գունային ակտիվությամբ, ընդգծված խարակտերայնությամբ, նկարչական մտածողության արդիականությամբ: Այս երեւոյթը ուսանողների համար ստեղծագործական փորձի փոխանակում է նաեւ, նորի, ուրիշի, այլ մշակույթի հետ շփման հնարավորություն եւ անհրաժեշտություն, որն, անշուշտ, բարեկամության նոր կամուրջ կարող է ծառայել թե՛ մշակութայնորեն, թե՛ մարդկայնորեն՝ ինչ-որ տեղ օտարացած ժողովուրդների երիտասարդների համար: Սա կարելու քայլ է նաեւ միմյանց մշակույթները ճանաչելու եւ հետագա փոխհարաբերությունները զարգացնելու առումով:

Այս մասին էր Վրաստանի մշակույթի նախարարության ներկայացուցչի՝ Յուրի Մելիտովի ողջույնի խոսքը (ցավալիորեն մեր մշակույթի նախարարության ներկայացուցիչը բացակայում էր): Նա խոսեց, իհարկե, հայ եւ վրացի ժողովուրդների մշակութային կապերի վերահաստատման ու զարգացման կարեւորության մասին,

պատմեց նաեւ նկարների փոխադրման՝ սահմանային անցակետում ծագած բարդությունների եւ իզուր վատնված ժամանակի մասին: Եվս հետաքրքրական մի բան, որ նրա խոսքում հնչեց, այն էր, որ իրենց ուսանողներից շատերը, որ եղել են աշխարհի նշանավոր մի շարք թանգարաններում, օրինակ՝ Լուվրում, Պոմպիդու կենտրոնում եւ այլ սակայն շատերը նրանցից տեղյակ չեն ծննդավայրում Վրաստանում լայնորեն հայտնի Սերգեյ Փարաջանովի երեւանյան թանգարանից: Նոր բարեկամության այս ժեստը լավագույն առիթներից մեկը կարող է լինել՝ երկու երկրների մշակույթները ճանաչելու:

Հայ-վրացական այս նոր ծրագրի, նաեւ ցուցահանդեսի մասին խնդրեցինք խոսք ասել բուհերի ռեկտորներին:

Թինատին Կըլդիաշվիլի. «Հաճույքով ողջունում եմ այս ցուցահանդեսը: Հայերը շատ բարեհամբույր մարդիկ են: Մեր ավագ սերունդը անցավ մեր ժողովուրդների տեւական բարեկամության ճիշտ ճանապարհով, որը ինչ-որ տեղ, մի ընթացք կանգ առավ: Մենք, ահա Արամ Իսաբեկյանի հետ որոշեցինք շարունակել մշակութային, նաեւ ուղղակի պարզ-մարդկային այն հարաբերությունները, որ, ցավոք, կորցրել է մեր երիտասարդությունը, որպեսզի նրանք ճանաչեն միմյանց եւ լինեն մշակութային ընդհանուր դաշտում, միմյանց հետ բարեկամության մեջ»:

Արամ Իսաբեկյան. «Համագործակցության այս ծրագիրը փորձել էինք իրագործել մի քանի անգամ, բայց չէինք հաջողել: Կարծում եմ՝ Վրաստանում իշխանական վերջին փոփոխությունները նպաստավոր եղան մեր այս փոխհարաբերությունների համար: 1.5 ամիս առաջ սկսված բանակցությունների առաջին քայլը այս ցուցահանդեսն է մեր ակադեմիայի սրահում, հաջորդը մեր ուսանողների աշխատանքների ցուցադրությունն է լինելու դեկտեմբերին, Թբիլիսիում: Հետագայում նախատեսված է ուսանողների եւ դասախոսների համատեղ ցուցադրություն՝ կատալոգի տպագրությամբ: Լավ բարեկամության սկիզբ է դրվել՝ երկուստեք ցանկությամբ, որ, հուսով եմ, շարունակական է լինելու»:

Թբիլիսիի արվեստի ակադեմիայի ուսանողների աշխատանքները Ալբեր եւ Թովե Բոյաջյան ցուցասրահում կհյուրընկալվեն եւս մի քանի օր:

Մելանյա Բադայան